ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի
(Կ-176-03.11.2017-ՊԻՄԻ-017/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագիծը շարադրել նոր խմբագրությամբ:	Ընդունվել է: Նախագիծը ներկայացվում է նոր խմբագրությամբ (տե՛ս նախագծի փաթեթին կից ներկայացված տեղեկանքը):	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ	Առաջարկվում է «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի հետ քննարկել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը: Առաջարկը պայմանավորված է «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծով սահմանված	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը	Ընդունվել է

			քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծը հանրաքվեի դնելիս ստորագրությունների հավաքագրումը կատարվում է նաև նոտարական գրասենյակներում, որի համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է համապատասխան չափով պետական տուրք՝ նոտարական կարգով ստորագրությունները վավերացնելու համար:		
3.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գևորգ Կոստանյան**	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի 13-րդ հոդված	Առաջարկվում է «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի 13-րդ հոդվածով սահմանել, որ ստորագրությունների հավաքագրմանը (նախաձեռնել, կազմակերպել, օժանդակել) կարող են ներգրավվել 16 տարին լրացած քաղաքացիները:	Ընդունվել է: «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: